Արձանագրություն N 3

ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Մարշալ Բաղրամյան պող. 26/1
Հանրապետության նախագահի
աշխատակազմի վարչական շենք

06 մարտի 2024թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝ Ամասիա Կիրակոսյան
գնահատող անդամներ՝ Արթուր Սարգսյան
Կարինե Թադևոսյան
քարտուղար՝ Հայկ Խաչատրյան

Գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտնեց, որ 05.03.2024թ. ստացվել են հարցումներ հետևյալ բովանդակություններով.

1. «Հարգելի գործընկեր 29-րդ չափաբաճնի տեխնիկական բնութագիրն է-Սոսինձ նախատեսված MDF-ի, 200-500մլ տարաներով, փայտյա իրերի, կաուչուկի, կաշվե, պլաստմասե, և այլ իրերի սոսնձման համար 1-որքան պետք է լինի սոսնձի տարաների չափը 2-Ձեր նշած 4կգ-ից որքան պետք է լինի հեղուկ մասը՝ սոսինձը, որքան ՝ գազային մասը՝ակտիվատորը 3-4 կգ պետք է լինի տարայի հետ միասին, թե միայն տարաների միջի հողուկսոսնձի և գազային մասի քաշը»
2. «Հարգելի գործընկեր 29-րդ չափաբաժնի Ձեր կողմից նշված տեխնիկական բնութագիրն է-Սոսինձ նախատեսված MDF-ի, 200-500մլ տարաներով, փայտյա իրերի, կաուչուկի, կաշվե, պլաստմասե, և այլ իրերի սոսնձման համար: Անհրաժեշտ է ինձ իմանալ այս հարցերի պատասխանները 1-Արդյոք խոսքը երկկոմպոնենտ սոսնձի մասին է 2-որքան պետք է լինի սոսնձի տարաների չափը 3-Ձեր նշած 4կգ-ից որքան պետք է լինի հեղուկ մասը՝ սոսինձը, որքան ՝ գազային մասը՝ակտիվատորը 3- 4 կգ պետք է լինի տարայի հետ միասին, թե միայն տարաների միջի հեղուկ սոսնձի և գազային մասի քաշը»

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հարցում կատարած հնարավոր մասնակցին (մասնակիցներին) ներկայացնել հետևյալ նույն բովանդակությամբ պարզաբանումները.
«Հարգելի հնարավոր մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը՝ գնահատող հանձնաժողովը պարզաբանում է, որ.

1. տեխնիկական բնութագրերում նշված է տարաների չափը, դրանք են՝ 200-500մլ., որը նշվում է տարայի վրա «գր» կամ «մլ» չափման միավորներով,
2. տեխնիկական բնութագրերում նշված չէ, որ սոսինձը պետք է պարտադիր լինի երկկոմպոնենտ, այսինքն՝ պահանջվում է ունիվերսալ սոսինձ՝ բնութագրերում նշված իրերը սոսնձելու համար, որն ըստ իր օգտագործման եղանակի կարող է ունենալ կամ չունենալ լրացուցիչ չորացնող կոմպոնենտ.

3. նշված 4 կգ-ը դա զուտ սոսնձի քանակն է, իսկ երկկոմպոնենտ սոսինձ առաջարկվելու դեպքում պետք է հաշվի առնել, որ չորացնող կոմպոնենտի ծավալը չի առնչվում սոսնձի պահանջված 4կգ-ի հետ, դրա ծավալը պետք է լինի սոսնձի ծավալին համապատասխան:»

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ամասիա Կիրակոսյան

գնահատող անդամներ՝ _____ Արթուր Սարգսյան

_____ Կարինե Թադևոսյան

քարտուղար՝ _____ Հայկ Խաչատրյան